ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՏՐԱՐՐՈՒՄ Է **«ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»** ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ՝ ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ

Մագիստրոսական ծրագրի նպատակն է պետության տնտեսական քաղաքականության մշակման և իրականացման բնագավառում բարձր որակավորում ունեցող ղեկավարների և մասնագետների պատրաստումը: «Քաղաքական տնտեսագիտություն» մագիստրոսական ծրագիրը նախատեսված է նրանց համար, ովքեր հետաքրքրված են Հայաստանի և աշխարհի սոցիալ-տնտեսական վիճակը կանխորոշող բարդ գործընթացներով, ցանկանում են ձեռք բերել տնտեսական որոշումների ընդունման հմտություններ, ինչպես նաև սովորել այդ որոշումներին տալ արհեստավարժ քանակական և որակական գնահատականներ: Ծրագիրը հնարավորություն կընձեռի նաև բացահայտել երկրի ընթացիկ և համաշխարհային քաղաքականության ազդեցությունը տնտեսական որոշումների կայացման վրա, և ընդհակառակը: Տնտեսագիտության և քաղաքականության փոխազդեցությունը և փոխներգրավվածությունը հանդիսանում են բարդ համակարգային գործընթաց, որի ուսումնասիրումը և իմացությունը անհրաժեշտ է բոլոր նրանց, ովքեր որոշել են մասնագիտանալ այս ոլորտում:

Մեր դասախոսական կազմի անդամները բազմամյա գործունեության փորձ ունեն ակադեմիական բնագավառում, պետական կառավարման մարմիններում և մասնավոր հատվածում:

Ծրագիրը նախատեսում է պրակտիկայի անցկացում Ձեր հետազոտական հետաքրքրությունների հետ առընչվող կազմակերպություններում, ինչպես նաև ընձեռում է աշխատանքի հնարավորություն պետական կառավարման մարմիններում և միջազգային կառույցներում:

Ուսման վարձը կազմում է՝

- ✓ առկա ուսուցում՝ 900 հազ. դրամ
- ✓ հեռակա ուսուցում – 500 հազ. դրամ

Ծրագրի նակարագիրը՝

- ✓ Ծրագրի ղեկավար՝ ՀՌՀ Ռեկտոր, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, տ.գ.դ., պրոֆեսոր, Արմեն Ռազմիկի Դարբինյան
- ✓ Ուսուցման լեզուն՝ – **ռուսերեն:** Ծրագրի շրջանակներում նախատեսված է անգլերենով 5 և հայերենով 1 առարկայի դասավանդում
- ✓ Ուսման տևողությունը՝ **2 տարի**
- ✓ **Շրջանավարտները կստանան պետական նմուշի երկու դիպլոմ (ՌԴ և ՀՀ)**

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել՝
էլ. հասցե՝ irina.petrosyan@rau.am
Viber/WhatsApp: +374 94 03 94 76 (զանգահարել 9:00-18:00)

Ընդունելության հարցերով դիմել՝
էլ. հասցե՝ elza.gevorgyan@rau.am
Viber/WhatsApp: +374 99 40 61 57